ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵՐԿԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ.

ԿՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-35

Հիմնաբառեր. *կրոնական զբոսաշրջություն, ուխտագնացություն, եկեղեցի, վանական համալիր, քրիստոնեություն*

Հայաստանում կան էական նախադրյալներ կրոնական զբոսաշրջության զարգացման համար: ՀՀ-ն համարվում է քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած երկիրը, և այսօր այստեղ առկա են 1475 եկեղեցի, 610 մատուռ: Կրոնական կառույցների ընդհանուր թիվը 2444 է:

Հոդվածում ներկայացվել են ուխտագնացության զբոսաշրջության որոշ երթուղիներ, ինչպես նաև կատարվել առաջարկներ երթուղիների ընդլայնման, մարքեթինգային գործունեության բարելավման, քրիստոնեական տոները մեծ շուքով նշելու և զբոսաշրջիկներ ներգրավելու, ինչպես նաև «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր՝ Հայաստան» վկայականի շնորհման ուղղությամբ՝ հաշվի առնելով միջազգային փորձը:

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում:

120-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ վեց մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ: Հոդվածներից 11-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

Հայաստանում, ի թիվս զբոսաշրջության շատ տեսակների, իր ուրույն տեղն ունի կրոնական կամ ուխտագնացության զբոսաշրջությունը: Կրոնականը զբոսաշրջության ամենահին տեսակներից է և կապված է կրոնների առաջացման ու հավատացյալների՝ դեպի սուրբ վայրեր ճանապարհորդելու հետ: Կրոնական զբոսաշրջության հետ մեկտեղ, օգտագործվում է «ուխտագնացություն» եզրույթը, որը ենթադրում է կրոնական ճանապարհորդություն դեպի «սուրբ վայրեր»[1]: Կրոնական զբոսաշրջության հիմնական նպատակներն են՝ ուխտագնացություն կատարել՝ որպես պաշտամունքի գործողություն, երախտագիտություն հայտնել, խոստո-

[1] Smith V. L., Introduction: The quest in guest. Annals of Tourism Research, 1992, Vol. 19, pp. 1–17.

վանել մեղքը և ուխտ կատարել, հոգևոր փրկության հասնել, հարգել և նշել որոշակի կրոնական իրադարձություններ, հավատացյալների հետ շփման մեջ լինել և այլն[2]:

Կրոնական զբոսաշրջության զարգացումը կապված է համաշխարհային երեք կրոնների՝ բուդդայականության (մ.թ.ա. VI-V դարեր), քրիստոնեության (մ.թ. I դար) և իսլամի (մ.թ. VII դար) տարածման ու հավատացյալների՝ դեպի սուրբ վայրեր ճանապարհորդելու հետ: Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ տարեկան 300-330 միլիոն զբոսաշրջիկ է այցելում աշխարհի կրոնական վայրեր, շուրջ 600 միլիոն ազգային և միջազգային կրոնական ճանապարհորդություններ են լինում աշխարհում, որոնց 40%-ը՝ Եվրոպայում: Կրոնական ժառանգության վայրերը ոչ միայն խթանում են միջազգային զբոսաշրջությունն ու տնտեսական աճը, այլև նպաստում տարբեր մշակույթների, ժողովուրդների միջև հարգանքի, հանդուրժողականության, փոխըմբռնման, խաղաղության հաստատմանն ու տարածմանը[3]:

Այսօր քրիստոնյաներն ամենամեծ կրոնական խումբն են աշխարհում՝ 2.38 միլիարդ մարդ կամ աշխարհի 8 միլիարդ բնակչության[4] 30.12%-ը, այնուհետև մահմեդականներն են՝ 1.91 միլիարդ մարդ կամ 24.17%, հինդուականները՝ 1.16 միլիարդ մարդ կամ 14.6%, բուդդայականները՝ 507 միլիոն մարդ կամ 6.4%, չինական ժողովրդական կրոնին հարողները՝ 430 միլիոն մարդ կամ 5.44%, իսկ ոչ հավատացյալները կազմում են 1.19 միլիարդ մարդ կամ աշխարհի բնակչության 15%-ը[5]: Ըստ Pew Research Center-ի կանխատեսումների՝ 2060 թ. աշխարհի բնակչությունը կհասնի 9,6 միլիարդի: Քրիստոնյաները կկազմեն 3,1 միլիարդ մարդ կամ աշխարհի բնակչության 32%-ը, մահմեդականները՝ 3 միլիարդ մարդ կամ 31%-ը, հինդուականները՝ 1.4 միլիարդ մարդ կամ 14.5%-ը, ոչ հավատացյալները՝ 1.2 միլիարդ մարդ կամ 12.5%[6]:

Երուսաղեմը, լինելով երեք կրոնների խաչմերուկ, տարեկան ընդունում է 3-3.5 միլիոն զբոսաշրջիկ՝ Իսրայելի զբոսաշրջիկների շուրջ 85%-ը[7]:

Քրիստոնյաների ուխտագնացություն առաջին անգամ կատարվել է Քրիստոսի ծննդի, կյանքի, խաչելության և հարության հետ կապված վայրերում: Այնուհետև այլ սրբերի նահա-տակության վայրեր ևս դարձել են ուխտատեղիներ: Ամենահայտնի և այցելվող ուխտատեղի-ներն են Երուսաղեմը, Վատիկանը, Սանտյագո դե Կոմպոստելան:

[2] Religious Tourism (Pilgrimage), pp. 73-74, https://egyankosh.ac.in/bitstream/123456789/11473/1/Unit-6.pdf
[3] Tourism can protect and promote religious heritage, https://www.unwto.org/archive/europe/press-release/2014-12-10/tourism-can-protect-and-promote-religious-heritage
[4] Current world population, https://www.worldometers.info/world-population/
[5] Religion by Country 2022, https://worldpopulationreview.com/country-rankings/religion-by-country
[6] The Changing Global Religious Landscape, http://www.pewforum.org/2017/04/05/the-changing-global-religious-landscape/
[7] Jerusalem is fastest-growing tourism destination in world, https://www.israel21c.org/jerusalem-is-fastest-growing-tourism-destination-in-world/

Հայաստանը համարվում է քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած երկիրը (301 թ.): Հայկական եկեղեցին Հին արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիներից մեկն է: Հայոց եկեղեցին առաքելական է, քանի որ հիմնվել է ուղղակիորեն տասներկու առաքյալներից երկուսի՝ Սուրբ Թադեոսի և Սուրբ Բարդուղիմեոսի կողմից, որոնք էլ ձեռնադրել են հայ առաջին եպիսկոպոսներին: Հայ եկեղեցին ուղղափառ է, քանի որ ունի Քրիստոսի ճշմարիտ հավատքը[8]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում են ներառված Հաղպատի և Սանահինի վանական համալիրները (1996 թ.), Գեղարդի վանական համալիրը (2000 թ.), Էջմիածնի եկեղեցիները և Մայր Տաճարը (2000 թ.)[9]:

2001 թ. Հայաստան այցելեց Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապը՝ մասնակցելու Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին: 2015 թ. Հռոմի Ֆրանցիսկոս պապը Գրիգոր Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ, և վերջինս դարձավ 36 վարդապետներից մեկը[10]: 2016 թ. ամռանը Հայաստան այցելեց Հռոմի Ֆրանցիսկոս Առաջին պապը: Մինչ այդ նա հավատացյալներին դիմել էր հետևյալ ուղերձով. «Խնդրում եմ աղոթեք ինձ համար, քանի որ ես մի քանի օրից մեկնելու եմ ուխտագնացության Արևելք՝ Հայաստան, որն առաջինն է ստացել Հիսուսի Ավետարանը»[11]:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների՝ ՀՀ-ում առկա են 1475 եկեղեցի, 610 մատուռ: Կրոնական կառույցների ընդհանուր թիվը 2444 է (աղյուսակ 1):

2017 թ. ՀՀ ՏԶՆՆ-ն (այժմ՝ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե) մշակեց «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության նախագիծը, որն այդպես էլ չընդունվեց: Դրանում ներկայացված էր ուխտագնացության ծրագիր-երթուղիների չորս օրինակ՝ «Համահայկական ուխտագնացություն «Լուսավորչի ուղին»» (առաջարկել է Աշոտ Փարսյանը), «Այցելություն առաջին քրիստոնյա երկիր (առաջարկել է Հայաստանի մշակույթի և տուրիզմի պրոպագանդման հիմնադրամը), «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» երթուղի Լոռու մարզում» (առաջարկել է ՀՀ Լոռու մարզպետարանը), իսկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին առաջարկել էր երկու ծրագիր՝ «Լուսավորչի ճանապարհ» և «Աստվածամուխ Սբ. Գեղարդի ուխտի օր»[12]:

Հոդվածի շրջանակում փորձել ենք կազմել ՀՀ կրոնական զբոսաշրջության որոշ երթուղիներ, որոնք կարող են գրավել զբոսաշրջիկներին:

1. Ուխտագնագություն դեպի Մայր Աթոռ Սբ. Էջմիածին և Էջմիածնի եկեղեցիներ:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը Հայաստանյայց եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է, որը կառուցվել է 303 թ.[13]: Այստեղ է գտնվում հայ ժողովրդի ու նրա հավատի հավերժության խորհրդանիշ, սրբազան ուխտատեղի Մայր Տաճարը, որը հիմնա-

[8] Հայաստանյայց եկեղեցին այսօր: Ո՞վ ենք մենք, https://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=10472&pid=3
[9] Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am
[10] Pope Francis names St. Gregory of Narek a doctor of the church, https://www.ncronline.org/news/vatican/pope-francis-names-st-gregory-narek-doctor-church
[11] Pray for Armenia trip Pope Francis urges, http://www.ansa.it/english/news/vatican/2016/06/16/pray-for-armenia-trip-pope-urges_d071623b-627c-4129-bb00-1eec9ed21488.html
[12] «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության նախագիծ, https://www.e-draft.am/projects/229/about
[13] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Տաճար, https://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=2360&pid=4

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կրոնական կառույցների թիվը ՀՀ-ում[14]

ՀՀ	Տարածք	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Ընդամենը
1.	Գավիթ	2	10	5	2	12	10	13	5	18	12	21	110
2.	Գրատուն (Մատենադարան)	-	-	-	-	-	2	1	-	-	-	1	4
3.	Եկեղեցի	18	157	78	43	157	234	163	158	225	87	155	1475
4.	Զանգակատուն	1	5	3	4	3	25	16	15	4	1	3	80
5.	Զոհասեղան (զոհարան)	-	3	-	-	-	-	2	4	-	-	-	9
6.	Ժամատուն	-	-	-	-	-	2	1	1	-	-	2	6
7.	Մատուռ	3	56	20	3	90	127	100	48	39	39	85	610
8.	Մզկիթ	3	1	-	-	-	-	-	1	1	-	-	6
9.	Նշխարատուն (գանձարան)	-	-	-	1	-	-	-	-	-	-	1	2
10.	Սրբատեղի	-	-	-	-	-	5	8	2	3	-	3	21
11.	Վանական համալիրներ	-	5	3	-	6	17	14	7	12	13	17	94
12.	Տաճար	3	-	-	2	-	-	4	2	-	-	1	12
13.	Տապանատուն	-	1	2	-	-	2	-	-	-	1	2	8
14.	Քարայր-մատուռ (քարայր-ուխտատեղի)	1	-	-	-	-	3	2	-	1	-	-	7
15.	Ընդամենը	31	238	111	55	268	427	324	243	303	153	291	2444

դրել է Հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ համաձայն իր տեսիլքի: Ըստ այդմ՝ Աստծու Միածին Որդին, իջնելով երկնքից և ոսկե մուրճով հարվածելով գետնին, ցույց է տվել այն վայրը, որտեղ պետք է կառուցվեր Էջմիածնի Սուրբ Տաճարը:

Սուրբ Հռիփսիմե վանքը 618 թ. հիմնադրել է Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը՝ IV դարում կառուցված Սբ. Հռիփսիմե նահատակի դամբարանի տեղում: Ըստ Ագաթանգեղոսի՝ Հռոմի Դիոկղետիանոս հեթանոս կայսրը ցանկանում էր կնության առնել շատ գեղեցիկ կույսերից մեկին՝ քրիստոնյա Հռիփսիմեին: Միանձնուհի Հռիփսիմեն, մայրապետ Գայանեն և մի քանի տասնյակ այլ միանձնուհիներ փախչում են Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից դեպի Հայաստան: Իմանալով կույսերի Հայաստան փախչելու մասին՝ Դիոկղետիանոս կայսրը նամակով դիմում է հայոց թագավոր Տրդատ III-ին՝ խնդրելով գտնել նրանց և մահապատժի ենթարկել, իսկ Հռիփսիմեին վերադարձնել իրեն: Զմայլվելով Հռիփսիմեի գեղեցկությամբ՝ թագավորը որոշում է ամուսնանալ նրա հետ, սակայն այդպես էլ չի կարողանում տիրանալ վերջինիս և զայրացած հրամայում է մեկուսացնել կույսերին տարբեր տեղերում ու սպանել: Հռիփսիմեի մահվան

[14] Տեղեկությունը տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:

վայրում կառուցվել է այս եկեղեցին, որտեղ և այսօր գտնվում է նրա դամբարանը[15]:

Էջմիածին քաղաքի հարավային կողմում, Սբ. Գայանեի նահատակման վայրում է գտնվում Սբ. Գայանե վանքը: Այնտեղ, ըստ Ագաթանգեղոսի, 301 թ.-ին Գրիգոր Ա Լուսավորչի ղեկավարությամբ և նրա գցած հիմքի վրա Տրդատ Գ Մեծը, նրա քույր Խոսրովիդուխտը և Աշխեն թագուհին վկայարան են կառուցել: 395 թ.-ին Սահակ Ա Պարթևը վերակառուցել է Սբ. Գայանեի վկայարանը: 630 թ.-ին Եզր Ա Փառաժնակերտցին քանդել է վկայարանը և տեղում սրբատաշ տուֆով հիմնել այսօր կանգուն Սբ. Գայանե եկեղեցին, ինչպես նաև վանական միաբանություն[16]:

Սբ. Շողակաթ եկեղեցին 1694 թ. կառուցել է իշխան Աղամալ Շոռոթեցին՝ VI-VII դդ. շինության հիմքի վրա: Ըստ ավանդույթի՝ եկեղեցին հիմնադրվել է այն վայրում, որտեղ հռիփսիմյան նահատակ կույսերի վրա «Շող է կաթել»[17]:

Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին Էջմիածին քաղաքի կենտրոնական մասում է: Այն կառուցվել է 1767 թ.՝ երջանկահիշատակ Սիմեոն Երևանցի Ամենայն հայոց կաթողիկոսի օրոք[18]:

2. Ուխտագնացություն դեպի Խոր Վիրապ վանական համալիր և Նորավանք:

Խոր Վիրապ վանական համալիրը գտնվում է Արարատի մարզում: Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատ Գ Մեծը Հայաստանում քրիստոնյաներին հալածելիս Գրիգոր Ա Լուսավորչին տևական տանջանքներից հետո նետել է Արտաշատի արքունի բանտի՝ մահվան դատապարտվածների գուբը, որը հայտնի էր «Վիրապ Արտաշատու» անվամբ, որտեղ Գրիգոր Լուսավորիչը մնացել է գրեթե 14 տարի: Նրան ամեն օր գաղտնի կերակրել է մի այրի կին: Գրիգոր Լուսավորիչն ազատվել է վիրապից Հռիփսիմյանց կույսերի նահատակումից 9 օր անց: Ամեն տարի հու-

նիսին նշվում է Հայ առաքելական եկեղեցու նշանավոր տոներից մեկը՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապեն», իսկ մարտին՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապ»: V դ. վիրապի վրա վանք է հիմնադրվել ու միաբանություն հաստատվել[19]:

Նորավանքը Հայաստանի միջնադարյան հոյակերտ հուշարձաններից է: Վկայություններ կան, որ այստեղ սրբատեղի է եղել հնագույն ժամանակներից ի վեր: Վանքը հիմնադրվել է XII դ.-ում՝ ավելի վաղ գոյություն ունեցած երկու եկեղեցիների տարածքում և կառուցապատվել հիմնականում XIII-XIV դդ.: Նորավանքը հիմնադրել է Վահանավանքի (Կապանի մերձակայքում) վանահայր Հովհաննես եպիսկոպոսը: Հաջորդ երկու դարերի ընթացքում այն ընդլայնվել է՝ շնորհիվ Սյունիքում իշխող Օրբելյանների եկեղեցանպաստ գործունեության ու դարձել հոգևոր, կրթական ու մշակութային կենտրոն և Օրբելյանների տոհմական գերեզմանատունը: Նորավանքի համալիրը բաղկացած է Սուրբ Աստվածածին (Բուրթելաշեն) դամբարան-եկեղեցուց, Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցուց, նրան արևմուտքից կից գավթից, Սուրբ Գրիգոր եկեղեցուց (Ստեփանոս Օրբելյանի դամբարան), միջնադարյան մատուռների և շինությունների մնացորդներից, նորակառույց Վանատնից:

[15] Սուրբ Հռիփսիմե վանք, https://ejmiatsin.am/our-city/31/
[16] Սուրբ Գայանե վանք, https://ejmiatsin.am/our-city/34/
[17] Սուրբ Շողակաթ եկեղեցի, https://ejmiatsin.am/our-city/35/
[18] Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, https://ejmiatsin.am/our-city/36/
[19] Խոր Վիրապ վանքի պատմությունը, http://ter-hambardzum.net/%D5%AD%D5%B8%D6%80-%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BA-%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80/

Վանքի պատմությունն անբաժանելի է միջնադարյան Հայաստանի նշանավոր ճարտարապետ և քանդակագործ Մոմիկի գործունեությունից: Մոմիկն Արենիի Սուրբ Աստվածածին (1321 թ.) եկեղեցու ճարտարապետը և քանդակագործն է: Նրա նրբաճաշակ հարթաքանդակները զարդարում են Նորավանքի գավթի մուտքի ճակատակալ քարերը: Մոմիկին են վերագրվում Նորավանքի համալիրի հարավարևելյան մասում գտնվող Սուրբ Աստվածածին երկհարկ եկեղեցի-դամբարանը (Բուրթելաշեն), եկեղեցու արևմտյան և հարավային պատերին արված երկու գեղաքանդակ հարթաքանդակները, ինչպես նաև կառույցի հարավային հատվածում գտնվող փոքրիկ պարզ խաչքարը, որը կանգնեցված է իր իսկ հիշատակին՝ որպես մահարձան[20]: Ըստ ավանդության՝ «Վարպետ Մոմիկը սիրահարվում է Սյունաց իշխանի գեղեցիկ աղջկան: Աղջիկն էլ հավանում է Մոմիկին: Սյունաց իշխանը կանչում է Մոմիկին և ասում. «Աղջկաս կտամ քեզ, եթե երեք տարում մի նոր գեղեցիկ վանք շինես ինձ համար»: Երիտասարդ վարպետն ընդունում է իշխանի պայմանը և գործի անցնում: Ապառաժներից քարեր կտրելով ու տաշելով՝ քիչ է մնում, որ որոշված ժամկետին ավարտի վանքի շինությունը: Իմանալով այդ՝ իշխանն ուղարկում է ծառային, որը, տիրոջ հրամանով բարձրանալով վանքի գմբեթը, այնտեղից ցած է հրում Մոմիկին: Մոմիկի տաշած վերջին քարը դառնում է նրա շիրմաքարը»[21]:

3. Ուխտագնագություն դեպի Գեղարդի վանք, որը, ըստ ավանդության, IV դարի սկզբին հիմնել է հայոց առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

Նախնական շրջանում կոչվել է Այրիվանք կամ Քարայրների վանք: Վանքի միաբաններն ապրել են հենց այդտեղ,

ինչպես նաև մոտակա քարայրներում, որոնք օգտագործվել են որպես մենակյացների խցեր: Ենթադրվում է, որ այս անձավներից մեկում ապրել է նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Այստեղ էր պահվում Սուրբ Գեղարդը՝ այն նվիրական նիզակը, որով հռոմեացի հարյուրապետը խոցել է խաչված Քրիստոսի կողը: Այդ պատճառով էլ Այրիվանքն անվանվել է նաև Գեղարդավանք: Ըստ ավանդության՝ Գեղարդի վանքում էր պահվում մեկ այլ մասունք ևս՝ մեկ բեկոր Նոյյան տապանից[22]:

4. Ուխտագնացություն դեպի Հովհաննավանք և Սուրբ Հովհաննես մատուռ:

Ուխտագնացության լավ երթուղիներ են Հովհաննավանքը, Սուրբ Հովհաննես մատուռը, ինչպես նաև Սուրբ Հովհաննեսի անունը կրող այլ եկեղեցիներ ՀՀ-ում:

Սուրբ Հովհաննես Կարապետը կամ Մկրտիչը քրիստոնեության մեծագույն սըրբերից և անհատականություններից է: Աստվածային ծրագրում Հովհաննեսը մեծ դերակատարություն է ունեցել՝ Իսրայելի ժողովրդին պատրաստելով Օծյալի գալըստյանը, մկրտելով նրան ջրով և ապաշխարություն քարոզելով[23]: Ըստ ավանդության՝ Հովհաննեսի գլուխը թաղված է

[20] Նորավանք 6: Պատմությունը. Նորավանք: Մոմիկ. Համալիրը, http://www.armenianheritage.org/hy/monument/Noravank/664

[21] Մոմիկ ճարտարապետ. ավանդությունն ու իրականությունը, https://www.art365.am/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D6%82/%D5%B4%D5%B8%D5%B4%D5%AB%D5%AF-%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF-%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8

[22] Գեղարդ, http://www.armenianheritage.org/hy/monument/Geghard/396



Արցախի Գանձասար վանական համալիրում:

Հովհաննավանք վանական համալիրը XIII դ. հայկական նշանավոր պատմաճարտարապետական հուշարձաններից է: Գտնվում է Օհանավան գյուղում, Քասախի կիրճի արևմտյան եզրին: Համալիրի կազմում ընդգրկված են IV դ.-ի Ս. Կարապետ միանավ բազիլիկ եկեղեցին, 1216-1221 թթ.-ի Ս. Կարապետ գլխավոր եկեղեցին, XIII դ.-ի գավիթը, տապանատունը, հուշասյուն կոթողը, թևավոր խաչքար և որմնափակ խաչքարեր, դպրոցի, միաբանության շենքեր ու վանական համալիրը պաշտպանող պարսպապատը: Ըստ ավանդության՝ վանքը հիմնադրվել է IV դ. սկզբին, երբ Գրիգոր Լուսավորիչը կառուցել է միանավ բազիլիկը: Եկեղեցու Ս. Կարապետ անվանումը կապվում է Հայաստանում քրիստոնեական առաջին եկեղեցիներից մեկը լինելու հանգամանքի հետ[24]: Այստեղ է պահվում Հովհաննես Մկրտչի մասունքը:

Սուրբ Հովհաննես մատուռը գտնվում է Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի Ճգնավոր լեռան (2197 մ) կատարին՝ Փամբակի լեռնաշղթայի դժվարամատչելի բարձունքներից մեկի վրա: Մատուռը կառուցվել է 1958 թ.-ին՝ այն տեղում, որտեղ ամփոփված է Սուրբ Հովհաննեսի մասունքը: Սրբատեղի հասնելու համար պահանջվում է 1-1.5 ժամ: Այցելուները, որոնց երազանքները կատարվել են, ի նշան շնորհակալության, 2005 թ.-ին մի խաչքար են կանգնեցրել այստեղ: Այսօր արդեն մատուռի տարածքում 200-ից ավելի խաչքար կա տեղադրված[25]:

Ուխտավորներին հետաքրքրում է նաև Աբովյան քաղաքում 2013 թ. օծված Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Ի դեպ, նրանց ուշադրությունից չի վրիպում նաև Երևանի Կոնդի բարձունքում 1710 թ. կառուցված համանուն մեկ այլ եկեղեցի:

5. Ուխտագնացություն դեպի Ծաղկեվանք և Արագածոտնի մարզի եկեղեցիներ:

Ծաղկեվանքը Արագածոտնի մարզում, Արայի լեռան լանջերին բնական քարանձավի մեջ գտնվող մատուռ է: Հայ առաքե-

[23] Սուրբ Հովհաննես Կարապետ (Մկրտիչ), http://armenianchurchco.com/9781.html
[24] Հովհաննավանք վանական համալիր, https://hushardzan.am/archives/2977
[25] Սուրբ Հովհաննես մատուռի հրաշագործ ուժն ու մատուռ տանող բարդ ճանապարհը, https://www.shantnews.am/news/view/456424.html

լական եկեղեցին այն նաև կոչում է կույս Վարվառայի մահարձան: Ըստ ավանդազրույցի՝ Քրիստոնյա Վարվառա կույսը, փախչելով կռապաշտ հորից, թաքնվել է Արայի լեռան քարանձավում: Հայրը հետապնդել է աղջկան, գտել և սպանել նրան: Նահատակվելուց առաջ Վարվառան Աստծուն խնդրել է, որ ծաղիկ և կարմրուկ հիվանդություններ ունեցող մանուկները բժշկվեն իր անունով: Ըստ հավատալիքի՝ Աստված կատարել է նրա խնդրանքը, և Վարվառայի բարեխոսությանը դիմող ծնողների զավակներն ազատվել են այդ հիվանդություններից: Հայ առաքելական եկեղեցին այս ավանդությամբ է մեկնաբանում Արայի լեռան վրա գտնվող ուխտատեղիի անվանումը: Ծաղկեվանքի առաստաղից հոսող ջուրը երբեք չի կտրվում: Իսկ մարդիկ այստեղ գալիս են քարանձավի առաստաղից հոսող սուրբ կույսի «արցունքները» հավաքելու ու դրանցով իրենց ցավերը բուժելու հավատով[26]:

Աշտարակի եկեղեցիներ՝ Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր, Սուրբ Սարգիս, Սուրբ Մարինե:

Կարմրավոր (կամ Սուրբ Աստվածածին) եկեղեցին կառուցել են Գրիգոր և Մանաս քահանաները՝ VII դարում, Աշտարակում: Կարմրավորը Հայաստանում միակ եկեղեցին է, որի կարմիր կղմինդրե տանիքը մինչ օրս պահպանվել է: Ըստ հնուց եկող ավանդության՝ Աշտարակում ապրող երեք քույրեր սիրահարվում են Սարգիս անունով մի երիտասարդի: Երկու ավագ քույրերը որոշում են իրենց զոհաբերել՝ կրտսերին երջանկություն պարգևելու համար և, հագնելով ծիրանագույն ու կարմիր զգեստներ, իրենց ցած նետում են անդնդախոր ձորը: Այս լուրն իմանալով՝ փոքր քույրը հագնում է սպիտակ զգեստ և նույնպես իրեն ձորն է նետում: Սարգիսն էլ՝ անդարմանելի վշտից դառնում է ճգնավոր: Հետագայում ձորի եզրին երեք եկեղեցիներ են հայտնվում՝ Կարմրավորը, Ծիրանավորը և Սպիտակավորը[27]: Ըստ մեկ այլ վարկածի՝ եկեղեցիների անվանումը կապված է Մարիամ Աստվածածնի գլխաշորերի գույների հետ՝ սպիտակ, կարմիր, ծիրանագույն:

Արագածոտնի մարզում հայտնի է Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին: 441 թ.՝ Մեսրոպ Մաշտոցի մահից հետո, հազարապետ Վահան Ամատունին և զորավար Հմայակ Մամիկոնյանը նրա մարմինը տեղափոխում են Օշական, որտեղ երեք տարի անց Վահան Ամատունին մատուռ է կառուցում: 1875-1879 թթ. Գևորգ IV կաթողիկոսը մատուռի հիմքի վրա կառուցում է նոր հորինվածքով բազիլիկ եկեղեցի: Ավագ խորանի տակ գտնվող խցում Մաշտոցի դամբարանն է[28]: 2006 թ. եկեղեցու բակում բացվում է 36 խաչքար տառերի պուրակը:

Սաղմոսավանքը Սաղմոսավան գյուղի արևելյան մասում է, Քասախ գետի կիրճի աջ եզրին: Ըստ ավանդության՝ Սաղմոսավանքը հիմնադրել է Ս. Գրիգոր Լուսավորիչը, երբ թողել է հայրապետական սուրբ Աթոռը ու ճգնել Արագածի լանջերին: Նա ձմռան ցրտաշունչ եղանակին իջել է Քասախի կիրճը և այդտեղ ստեղծել երկու անապատ (մենաստան), մեկը՝ կիրճում, որն անվանվել է Լուսավորչի անապատ, իսկ մյուսը՝ կիրճի եզրին: Քանի որ վերջինում մշտապես պարապել են սաղմոսերգություն, այն անվանվել է Սաղմոսաց անապատ: Սաղմոսը հոգևոր երգ է, քնարական չափածո բանաստեղծություն: Սկսած 4-րդ դարից՝ Հայաստանյայց եկեղեցին լայնորեն գործածել է սաղմոսները:

[26] Բացահայտենք Հայաստանը. բժշկող Ծաղկեվանքը կամ կույս Վարվառայի վանքը, https://www.shantnews.am/news/view/368647.html

[27] Կարմրավոր եկեղեցի, Աշտարակ, Հայաստան, https://www.building.am/arm/buildings-index/karmravor-church-ashtarak-armenia/

[28] Սբ. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի, https://armeniadiscovery.com/hy/place/saint-mesrop-mashtots-church

Սաղմոսավանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Սիոնը (կաթողիկե), 1215 թ. կառուցել է Արագածոտնի կուսակալ, իշխանաց իշխան Վաչե Վաչուտյանը: Սաղմոսավանքը հայ դպրության զարգացման պատմության մեջ նշանակալի դեր է կատարել, ուստի այն երբեմն անվանվել է «հրեշտակաբնակ, լուսազարդ և ամենագով, յերկնահանգէտ և ի գերահռչակ ուխտ»: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին Սաղմոսավանքը դասել է իր ժամանակի հայկական ամենանշանավոր ութ մենաստանների շարքում[29]:

Մուղնիի Ս.Գևորգ վանքը գտնվում է Մուղնի գյուղի հարավային ծայրում: Ըստ XVII դարի պատմագիր Զաքարիա Սարկավագի՝ վանքը հիմնադրել է Հովհաննավանքի միաբանությունը: Դա, հավանաբար, տեղի է ունեցել XIII դ. 1-ին կեսին, քանի որ արդեն 1278 թ.-ին Մուղնիի Ս. Գևորգ վանքում ձեռագիր է ընդօրինակվել: XIII-XV դդ. այստեղ ձեռագրեր են գրվել, վանքը դարձել է հռչակավոր ուխտատեղի: XVII դարում վանքը ծաղկում է ապրել, և համալիրը 2 ան-գամ հիմնովին վերականգնվել է: 1632-1655 թթ. վանքի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը քանդել է արդեն խարխուլ եկեղեցին ու մյուս շինությունները և կառուցել նորերը՝ 2 զույգ մույթերով եռանավ բազիլիկը, պարիսպներ և խցեր: Հովհաննես վարդապետը, իր հերթին, հիմնովին քանդել է վանքը և 1664-1969 թթ. սրբատաշ տուֆ քարերով կառուցել նորը[30]:

Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության առավել ուշագրավ և ինքնատիպ կառույցներից է Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցին, որը գտնվում է գյուղի կենտրոնում: Ըստ հարավային և արևմտյան ճակատների շինարարական արձանագրության՝ եկեղեցին կառուցել է Գրիգորաս վանականը՝ VII դ.[31]:

Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության մեկ այլ ուշագրավ հուշարձան է Գառնահովիտ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, որը թվագրվում է VI-VII դդ.[32]:

Ամբերդ բերդաքաղաքի կենտրոնական բարձրադիր մասում է գտնվում Վահրամաշեն եկեղեցին՝ կառուցված 1026 թ., Վահրամ Պահլավունու հովանավորությամբ: Եկեղեցին ունի խաչաձև գմբեթավոր հորինվածք: Ուղղանկյուն հատակագծի մեջ ամփոփված է աղոթասրահը՝ արևելյան կողմի ավագ սեղանով և 4 անկյունների ավանդատներով[33]:

Տեղերի վանքը գտնվում է Արագածոտնի մարզում, Տեղեր գյուղում, Արագած լեռան հարավարևմտյան լանջին: Այս վանքային համալիրը բաղկացած է Սբ. Աստվածածին գմբեթավոր եկեղեցուց և գավթից: Համաձայն գավթի սյուներից մեկի վրա պահպանված արձանագրության՝ այն կառուցվել է Մամախաթունի՝ իշխան Վաչե Վաչուտյանի կնոջ հովանավորությամբ: Շինարարությունը սկսվել է 1213 թ. և ավարտին հասցվել 1232 թ.[34]:

Թալինի Կաթողիկե եկեղեցական համալիրը վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության եզակի հուշարձաններից է, որը գտնվում է Թալին քաղաքի հյուսիսային մասում: Համալիրը բաղկացած է Կաթողիկե և բազիլիկ եկեղեցիներից, պալատական կառույցից և գերեզմանոցից: Կաթողիկեն թվագրվում է VII դ.: Վնասվել է 1840 թ. և 1931 թ. երկրաշարժերից[35]:

[29] Սաղմոսավանքի միջնադարյան դպրոցը, https://www.qahana.am/am/christian/show/203496132/60
[30] Մուղնիի Ս. Գևորգ վանք, https://hushardzan.am/archives/1873
[31] Ս. Հովհաննես եկեղեցի, https://hushardzan.am/archives/4378
[32] Ս. Գևորգ եկեղեցի, https://hushardzan.am/archives/4413
[33] Ամբերդ, https://hushardzan.am/archives/160
[34] Տեղերի վանք, Տեղեր, Հայաստան, https://www.building.am/arm/buildings-index/tegher-monastery-tegher-armenia/
[35] Թալինի Կաթողիկե եկեղեցական համալիր, https://hushardzan.am/archives/4434, Գևորգյան Մ., Թովմասյան Գ., ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային հուշարձանների ներգրավումը զբոսաշրջության ոլորտ և մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը, «Պատմություն և մշակույթ», 2021, № 1, էջ 188-198:

6. Ուխտագնացություն դեպի Հառիճավանք, Մարմաշեն և Գյումրիի եկեղեցիներ:

Հառիճի վանական համալիրը գտնվում է Հառիճ գյուղում, թվագրվում է VII-XIII դդ.: Հառիճավանքի կազմում են մինչև XIII դ. կառուցված Ս. Գրիգոր և Ս. Աստվածածին եկեղեցիները, գրատուն-դպրատունը (կիսավեր) և երկու մատուռ: Համալիրի հնագույն հուշարձաններն են Ս. Գրիգոր եկեղեցին և «Ճգնավորի մատուռը»: Հառիճավանքն ավերվել է XI դ. սելջուկյան արշավանքների ժամանակ և նորոգվել XII դ.՝ Գրիգոր առաջնորդի կողմից: Հառիճավանքն այժմ գործող եկեղեցի է, որտեղ վերանորոգման աշխատանքներ են կատարվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ[36]:

Մարմաշենի վանական համալիրը գտնվում է Շիրակի մարզում, Վահրամաբերդ գյուղից 2 կմ հարավ-արևմուտք, Ախուրյան գետի ձախ ափին: Համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբից՝ մեծ և փոքր (Վերին): Մեծ հուշարձանախումբն ընդգրկում է Կաթողիկե եկեղեցին, 3 այլ եկեղեցի, գավիթ և գերեզմանատուն: Մարմաշենի վանքը բազմիցս նորոգվել է: 1870 թ. նորոգման աշխատանքները հովանավորել է Մկրտիչ Ջալալյանը՝ միաժամանակ, վանքին կից հիմնելով դպրոց: 1900 թ. այդ գործը ստանձնել է Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսը, իսկ արդեն 2001 թ.՝ իտալահայ բարերար Գայանե Կազնատին[37]:

Զբոսաշրջիկներին կարող են գրավել նաև Գյումրու Սուրբ Յոթ վերք եկեղեցին, Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, Սուրբ Նշան եկեղեցին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Սուրբ Սարգիս եկեղեցին, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Սուրբ Հակոբ Մծբնա եկեղեցին[38]:



7. Ուխտագնացություն դեպի Տաթևի վանական համալիր, որը գտնվում է Սյունիքի մարզի Տաթև գյուղի հարավում, Որոտան գետի վտակի անդնդախոր ձորի աջափնյա եզերքին:

Ավանդության համաձայն՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթևի վանքի առաջին եկեղեցին կառուցվել է IV դ., ունեցել անշուք տեսք, սակավաթիվ ճգնավոր միաբաններ: VIII դ. վերջին եղել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: 839 թ. Դավիթ եպիսկոպոսը սյունյաց Փիլիպե իշխանից գնել է վանքի շրջակայքի Արծիվ կոչվող տարածքը: 844 թ. նա նույն իշխանից նվեր է ընդունել Տաթև գյուղը, որտեղ և հիմնադրել է վանքը: Տաճարի հիմքը դրվել է 895 թ., շինարարությունն ավարտվել՝ 906 թ.[39]: Վանական համալիրի կազմում են Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Սբ. Պողոս-Պետրոս տաճարը, Սբ. Աստվածածին եկեղեցին: XIV դարում այստեղ հիմնադրվել է Տաթևի համալսարանը:

[36] Հառիճի վանական համալիր, https://hushardzan.am/archives/142
[37] Մարմաշենի վանք, https://hushardzan.am/archives/1914
[38] Գյումրու եկեղեցիները, https://www.gyumricity.am/hy/gyumri/churches
[39] Տաթևի վանքի պատմությունը, http://ter-hambardzum.net/tathevi-vankhi-patmuthyuneh-nkarner/

2010 թ. բացվել է 5752 մ երկարությամբ՝ աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղին, որը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում և կապում է Տաթևի վանքն ու Հալիձորը[40]:

8. Ուխտագնացություն դեպի Սևանավանք, Հայրավանք, Կեչառիս, Հաղարծին և Գոշավանք:

Սևանավանքը հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը՝ 305 թ., Սևանա լճի կղզում: Նա հեթանոսական մեհյանի տեղում կառուցել է տվել Ս. Հարություն եկեղեցին: IX դ. Սևանի վանական կյանքի վերածնունդը կապված է Մաշտոց Եղիվարդեցի վարդապետի գործունեության հետ: Նա հիմնել է Ս. Առաքելոց միաբանությունը և 874 թ. Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու դուստր, Սյունիքի Վասակ Գաբուռ իշխանի կին Մարիամի միջոցներով կառուցել Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եռախորան, խաչաձև գմբեթավոր եկեղեցիները[41]:

IX-XIII դարերին թվագրվող Հայրավանք վանքային համալիրը գտնվում է Հայրավանք գյուղի հյուսիսարևելյան եզրին, Սևանա լճի առափնյա ժայռեղեն հրվանդանի վրա: Պահպանվել են եկեղեցին և գավիթը: Տարածքի պեղումներով հայտնաբերվել են միջին բրոնզի և երկաթի դարերի զարդեր, զենքեր, գործիքներ, անոթներ, կրակարաններ և այլ իրեր[42]:

Կեչառիսի վանական համալիրը Ծաղկաձոր քաղաքի հյուսիսարևմտյան մասում է: Այն ձևավորվել ու ամբողջացել է XI-XIII դդ.՝ Պահլավունի և Պռոշյան իշխանների ջանքերով: Վանական համալիրի կազմում են Սուրբ Գրիգոր, Սուրբ Նշան, Սուրբ Աստվածածին և Սուրբ Հարություն եկեղեցիները[43]:

Հաղարծին վանական համալիրի ինքնատիպությունն ապահովում են պատմական տարբեր ժամանակաշրջաններում կառուցված երեք եկեղեցիները, երկու գավիթը (մեկը՝ ավերված) և սեղանատունը: Դրանցից ամենահինը Ս. Գրիգոր եկեղեցին է (մոտ X դ.), որը խաչաձև գմբեթավոր կառույց է: Եկեղեցուն հյուսիսից կից է թաղակապ մատուռը, իսկ արևելյան մասում կանգնած է նրբագեղ մանրամասներով, կապտավուն բազալտից կառուցված Ս. Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին (1244 թ.): Գլխավոր եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, գմբեթավոր դահլիճ է, որը, համաձայն հարավային մուտքի վերին մասի արձանագրության, կառուցվել է 1281 թ.[44]:

Գոշավանքը հիմնադրել է միջնադարի նշանավոր հոգևոր գիտնական, առակագիր և իրավագետ Մխիթար Գոշը՝ Հին Գետիկի վանքի տեղում, որը հիմնահատակ ավերվել էր 1186 թ. երկրաշարժից: Համալիրի կազմավորումն սկսվել է XII դ. վերջին և ամբողջացել շուրջ հարյուր տարվա ընթացքում, այդ պատճառով էլ իր կազմի մեջ մտնող հուշարձանների ճարտարապետությամբ ավելի միասնական է: Սկզբնապես կոչվել է Նոր Գետիկի վանք, ապա ժառանգել է իր հիմնադրի անունը՝ Գոշավանք: Գոշավանքը եղել է միջնադարի հոգևոր մշակույթի և գրչության հեղինակավոր կենտրոններից մեկը: Այստեղ գործող վարդապետարանում ուսուցանել են նաև իրավագիտություն ու պատմագիտություն, փիլիսոփայություն, ինչպես նաև արվեստներ (ճարտասանություն, մանրանկարչություն, երաժշտություն, գրչարվեստ): Այստեղ ուսանած հոգևոր գործիչները (Վանական Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին և այլք), շա-

[40] Հետաքրքիր փաստեր «Տաթևի դարպասների» մասին, https://www.tatever.am/am/explore-the-site
[41] Սևանավանք, https://www.mshakuyt.com/page-details.php?id=25&lang=am
[42] Հայրավանք վանական համալիր, https://hushardzan.am/archives/138
[43] Կեչառիսի վանական համալիրը, https://hushardzan.am/archives/11125
[44] Վանական համալիր Հաղարծին, https://hushardzan.am/archives/11727

րունակելով իրենց դպրոցի ավանդույթները, այնուհետև իրենք են այլ տեղերում ստեղծել հոգևոր դպրոցներ: Մխիթար Գոշի վանահայրության օրոք այստեղ կառուցվել են Ս. Լուսավորիչ փայտակերտ և Ս. Հովհաննես-Կարապետ փոքրիկ եկեղեցիները (չեն պահպանվել), Ս. Աստվածածին եկեղեցին իր գավթով: Վանքի կառուցապատումը շարունակվել է մինչև XIII դ. վերջը: Նոր Գետիկի ճարտարապետական համալիրի մասը կազմող հուշարձանները բաժանված են երկու խմբի: Ձորակի հյուսիսային լանջին տեղավորված է հիմնական խումբը՝ բաղկացած Ս. Աստվածածին, Ս. Լուսավորիչ, Ս. Գրիգոր եկեղեցիներից, ժամատնից, գրատուն–զանգակատնից, քաղաքացիական մի այլ շենքից, մատուռներից, պատվանդանավոր խաչքարերից: Այս խմբից հարավարևելք՝ ձորակի հանդիպակաց լանջին, իրարից փոքր-ինչ վեր տեղավորված են Սբ. Հռիփսիմե երկխորան եկեղեցին և մի ավերակ շենք, որը համարվում է Մխիթար Գոշի դամբարանը[45]:

9. Ուխտագնացություն դեպի Հաղպատի, Սանահինի, Ախթալայի և Օձունի վանական համալիրներ:

Հաղպատի վանական համալիրը գտնվում է Հաղպատ գյուղի հարավարևելյան բարձրադիր մասում՝ սարահարթի վրա: Այն հիմնադրվել է 976 թ.՝ Բագրատունի Աշոտ Գ-ի թագավորության ժամանակ: Համալիրի կազմում են Ս. Նշան տաճարը, երկու գավիթ, երեք փոքրաչափ եկեղեցի, երկու միջանցք-տապանատուն, սեղանատուն, գրատուն, զանգակատուն, մի քանի մատուռ-դամբարաններ և խաչքարեր[46]:

Համաձայն պահպանված գրավոր և նյութական վկայությունների՝ Սանահինի ներկայիս վանքը հիմնադրվել է X դարում՝ 930-ական թվականներին, Աբաս Բագրատունի թագավորի օրոք: Երկու վանքերում էլ և հատկապես Սանահինում դասավանդում էին հումանիտար գիտություններ,

երաժշտություն և բժշկություն, գրվում էին գիտական աշխատանքներ, այստեղ էին ստեղծագործում ժամանակի նշանավոր գրիչները, ծաղկողներն ու մանրանկարիչները[47]:

Ախթալան X դ. վերջին կառուցել են Կյուրիկյան Բագրատունիները: Կյուրիկեն Ախթալայից ոչ հեռու գտնվող Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնադիրներ Աշոտ Գ Ողորմած արքայի և Խոսրովանույշ թագուհու որդին էր: Ախթալայի պատմությունը սկսվում է թերևս բրոնզի ու երկաթի դարերից: 1887-1889 թթ. ֆրանսիացի հնագետ Ժակ դը Մորգանը Ախթալայում հայտնաբերեց 576 քարե ուղղանկյուն դամբարաններ, ինչպես նաև խեցե, երկաթե ու բրոնզե գտածոներ՝ Ք.ա. VII դարով թվագրվող: Տեղանքը հնուց ի վեր հայտնի է եղել որպես պղնձի հարուստ հանքավայր, իսկ պղինձը՝ տվյալ շրջանի հիմնական մետաղ: Պատմիչներ Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ՝ XII-XIII դարերում բնակավայրը կոչվել է Պղնձահանք: Ներկայում Ախթալայի վանքն ունի ուխտագնացության օրեր՝ սեպտեմբերի 20-21-ը: Ախթալան Հայաստանի որմնանկարչության զարգացման շրջանի անխաթար մնացած վառ օրինակներից է[48]:

Օձուն գյուղի կենտրոնում է գտնվում V-VI դդ. Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցին: Եկեղեցու կառուցումն ավանդա-

[45] «Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոց, https://hushardzan.am/archives/689, Գևորգյան Մ., Թովմասյան Գ., ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջային ռեսուրսները և զբոսաշրջության զարգացման հնա¬րավորությունների վերլուծությունը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 4(21), էջ 172-190:
[46] Հաղպատ, https://hushardzan.am/archives/86
[47] Սանահին, http://www.armenianheritage.org/hy/monument/Sanahin/928
[48] Ախթալա, http://www.armenianheritage.org/hy/monument/Akhtala/923

բար վերագրել են Հովհան Օձնեցուն: Եկեղեցին անվանվել է Ս. Աստվածածին, Ս. Նշան, Ս. Հովհաննես, Խաչգոնդ, Խաչգունդ: Վերջին անվանումը կապված է եկեղեցու բակում թաղված Խաչգունդ քահանայի անվան հետ, որի հիշատակին 1291 թ. կանգնեցրել են քանդակազարդ խաչքար՝ արձանագրությամբ: Եկեղեցու մոտ գտնվում է վաղ քրիստոնեական շրջանի կոթող, որը Հայաստանում քրիստոնեության հաղթանակը նշանավորող հոյակապ հուշարձան է[49]:

10. Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին կառուցվել է 1996-2001 թթ.՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Այն եկեղեցական համալիր է՝ բաղկացած երեք եկեղեցուց՝ Մայր, Սբ. Տրդատ թագավորի և Սբ. Աշխեն թագուհու մատուռներից: Եկեղեցու մուտքի առջև տեղադրված են 30-ից ավելի կամարներով կառուցված զանգակատունն ու գավիթը: Գավթում են պահվում Գրիգոր Ա Լուսավորչի մասունքները, որոնք 2000 թ. Գարեգին Երկրորդը բերել էր Նեապոլի Սբ. Գրիգոր Հայի եկեղեցուց[50]:

Երևանում կրոնական զբոսաշրջիկների սիրված վայրերից են նաև Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին, Սուրբ Զորավոր Աստվածածին, Սուրբ Սարգիս, Նորքի Սուրբ Աստվածածին, Մալաթիայի Սուրբ Մարիամ Աստվածածին, Սուրբ Երրորդություն, Սրբոց Նահատակաց և այլ եկեղեցիներ:

Վերոնշյալ եկեղեցիները և վանքերը, իհարկե, առկա ռեսուրսների շատ քիչ մասն են կազմում, ուստի երթուղիները կարող են ավելանալ, ընդլայնվել՝ ներառելով ավելի շատ վանքեր տարբեր մարզերից:

Այսպիսով, հաշվի առնելով Հայաստանի՝ առաջին քրիստոնյա երկիր լինելու հանգամանքը, կրոնական կառույցների մեծ քանակությունը, կարելի է վկայել, որ այստեղ առկա են էական նախադրյալներ կրոնական զբոսաշրջության զարգացման համար: Ուխտագնացության զարգացման ռազմավարության ընդունման, կրոնական զբոսաշրջային երթուղիների մշակման և գործարկման, տարբեր կրոնական միջոցառումների կազմակերպման, մարքեթինգային և այլ միջոցառումների իրագործման արդյունքում Հայաստանը կարող է դառնալ հայտնի և պահանջված կրոնական զբոսաշրջային ուղղություն, ուխտատեղի՝ քրիստոնյա ուխտավորների համար, ինչպես Երուսաղեմը, Վատիկանը, Սանտյագո դե Կոմպոստելան: Ի դեպ, նշված ուխտատեղիներում հատուկ վկայականներ կամ սերտիֆիկատներ են տրվում ուխտավորներին՝ այդպիսով հավաստելով նրանց ուխտավոր լինելու հանգամանքը: Իհարկե, ոչ բոլոր այցելուներն են արժանանում նման վկայականի: Օրինակ՝ Սանտյագո դե Կոմպոստելայում վկայական տրվում է միայն այն ուխտավորներին, որոնք դեպի ուխտատեղի ճանապարհի առնվազն 100 կմ-ն անցել են ոտքով, 200 կմ-ը՝ հեծանիվով, և նրանց ուխտը կատարվել է քրիստոնեական նպատակներով՝ Սուրբ Հակոբ Առաքյալի գերեզմանին հասնելու համար[51]: Վատիկանի ուխտավորներին վկայական տրվում է, եթե նրանք Սուրբ Պետրոսի տաճար հասնելու ճանապարհի առնվազն 140 կմ-ն անցել են ոտքով կամ 400 կմ-ը՝ հեծանիվով[52]: Երուսաղեմում վկայականը տրվում է այցելուներին՝ որպես հուշանվեր, որի նպատակն է ավարտված ուխտագնացությու-

[49] Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցի, https://hushardzan.am/archives/3068
[50] Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, https://www.yerevan.am/am/st-gregory-the-illuminator-church/
[51] The Credencial, https://oficinadelperegrino.com/en/pilgrimage/the-credencial/
[52] What is the Testimonium?, https://caminoways.com/what-is-the-testimonium

նը դարձնել հիշողություն, որն ապրում է՝ դառնալով երախտագիտության և ուրախության աղբյուր[53]: Հաշվի առնելով վերոնշյալ փորձը՝ Հայաստանում ևս կրոնական զբոսաշրջիկներին, որոնք ուխտագնացության որոշակի երթուղիներ են անցել, կարելի է տալ նման վկայականներ՝ որպես առաջին քրիստոնյա երկիր կատարած ուխտագնացության առհավատչյա:

Կրոնական զբոսաշրջության զարգացման համար նպատակահարմար է կատարել որոշակի քայլեր, որոնց արդյունքում ՀՀ-ն կարող է հայտնի դառնալ որպես քրիստոնեական ուխտագնացության վայր ամբողջ աշխարհում: Մասնավերապես.

- Մշակել կրոնական կամ ուխտագնացության զբոսաշրջության զարգացման ռազմավարություն:
- Հաշվի առնելով ՀՀ կրոնական կառույցների առկայությունը, դրանց յուրաքանչյուրի հետ կապվող պատմական փաստերն ու պատմությունները՝ մշակել ուխտագնացության երթուղիներ:
- Ուժեղացնել մարքեթինգային գործունեությունը, լայն արշավ կազմակերպել նաև թվային մարքեթինգի գործիքակազմի կիրառմամբ՝ ՀՀ-ն արտերկրում ներկայացնելով որպես առաջին քրիստոնյա երկիր, և քրիստոնյա ուխտավորներին առաջարկել ուխտագնացության երթուղիներ:

  Որքան էլ տխուր է հնչում, սակայն աշխարհում ՀՀ-ն լավագույնս դիրքավորված չէ որպես առաջին քրիստոնյա երկիր, և շատ միջազգային զբոսաշրջիկներ նույնիսկ տեղյակ չեն այդ մասին: Օրինակ՝ Սանտյագո դե Կոմպոստելայի տաճարը, որի մասին վերը նշեցինք, կառուցվել է XI դարում՝ շատ ավելի ուշ, քան Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը (303 թ.), մինչդեռ հայտնի ուխտագնացության վայր է, քանի որ հատուկ քայլեր են կատարվել այդ ուղղությամբ, մշակվել ուխտագնացության երթուղիներ ինչպես Իսպանիայի տարբեր մասերից, այնպես էլ տարբեր երկրներից (Ֆրանսիա, Պորտուգալիա, Անգլիա և այլն)[54] այստեղ ոտքով գալու համար: Ուստի, այս առումով, ՀՀ-ն պետք է ձեռնարկի իրական միջոցառումներ, որոնցից մեկն էլ կլինի «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր՝ Հայաստան» վկայականի շնորհումը:
- ՀՀ պաշտոնական զբոսաշրջային կայքէջում տեղ են գտել սահմանափակ թվով վանական համալիրներ: Մարքեթինգի բարելավման նպատակով հարկ է http://armenia.travel/ կայքէջում ունենալ առանձին բաժին՝ նվիրված հայկական եկեղեցիներին ու վանական համալիրներին: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում կան 1475 եկեղեցի, 610 մատուռ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի պատմություն ունի, ուստի այս ռեսուրսային ներուժը պետք է պատշաճ կերպով ներկայացնել՝ նկարներով, եղած պատմությամբ, նաև մատնանշելով առկա երթուղիները[55]:
- Եկեղեցիներում կարելի է կազմակերպել մշակութային միջոցառումներ, երաժշտական լուսային ներկայացումներ, ինչպես դա արվում է արտերկրում: Օրինակ՝ Վատիկանում երկու շաբաթ շարունակ լուսային շոու է կազմակերպվել Սուրբ Պետրոսի տաճարի ճակատին՝ որի միջոցով պատմվել է Հռոմի առաջին պապի մասին: Ըստ Սուրբ Պետրոս տաճարի վարդապետ՝ կարդինալ Մաուրո Գամբետիի, տեսանյութի ցուցադրությունը Վատիկանի հովվական ծրագրի մի մասն է՝ արվեստի միջոցով մարդկանց հավատքն ավելի ուժեղ դարձնելու համար[56]: Նման ներկայացումներ կարելի է կազմակերպել նաև ՀՀ եկեղեցիներում:
- Հայ առաքելական եկեղեցին ունի բազում քրիստոնեական տոներ, որոնք մեծ շուքով տոնելը, դրանց հիման վրա զբոսաշրջային այցելություններ գրավելը ևս կնպաստեն զբոսաշրջության զարգացմանը:

[53] Certificate of the pilgrimage in the Holy Land, http://www.cicts.org/default.asp?id=633
[54] Camino Routes, http://santiago-compostela.net/routes/
[55] Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, էջ 144-155:
[56] Vatican light show tells story of St Peter, https://www.wantedinrome.com/news/vatican-light-show-tells-story-of-st-peter.html

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ախթալա, http://www.armenianheritage.org/hy/monument/Akhtala/923
2. Ամբերդ, https://hushardzan.am/archives/160
3. Բացահայտենք Հայաստանը. բժշկող Ծաղկեվանքը կամ կույս Վարվառայի վանքը, https://www.shantnews.am/news/view/368647.html
4. Գեղարդ, http://www.armenianheritage.org/hy/monument/Geghard/396
5. Գյումրու եկեղեցիները, https://www.gyumricity.am/hy/gyumri/churches
6. «Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոց, https://hushardzan.am/archives/689
7. Գևորգյան Մ., Թովմասյան Գ., ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային հուշարձանների ներգրավումը զբոսաշրջության ոլորտ և մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը, «Պատմություն և մշակույթ», 2021, № 1, էջ 188-198:
8. Գևորգյան Մ., Թովմասյան Գ., ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջային ռեսուրսները և զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը, «Պատմություն և քաղաքականություն», թիվ 4 (21), էջ 172-190:
9. Խոր Վիրապ վանքի պատմությունը, http://ter-hambardzum.net/%D5%AD%D5%B8%D6%80-%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BA-%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82-%D5%B6%D5%A8-%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80/
10. Թալինի Կաթողիկե եկեղեցական համալիր, https://hushardzan.am/archives/4434
11. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն): Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, 622 էջ:
12. Կարմրավոր Եկեղեցի, Աշտարակ, Հայաստան, https://www.building.am/arm/buildings-index/karmravor-church-ashtarak-armenia/
13. Կեչառիսի վանական համալիրը, https://hushardzan.am/archives/11125
14. Հաղպատ, https://hushardzan.am/archives/86
15. Հայրավանք վանական համալիր, https://hushardzan.am/archives/138
16. Հայաստանյայց եկեղեցին այսօր: Ո՞վ ենք մենք, https://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=10472&pid=3
17. Հառիճի վանական համալիր, https://hushardzan.am/archives/142
18. Հետաքրքիր փաստեր «Տաթևի դարպասների» մասին, https://www.tatever.am/am/explore-the-site
19. Հովհաննավանք վանական համալիր, https://hushardzan.am/archives/2977
20. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Տաճար, https://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=2360&pid=4
21. Մարմաշենի վանք, https://hushardzan.am/archives/1914
22. Մոմիկ ճարտարապետ. ավանդությունն ու իրականությունը, https://www.art365.am/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D6%82/%D5%B4%D5%B8%D5%B4%D5%AB%D5%AF-%D5%B3%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF-%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8
23. Մուղնիի Ս.Գևորգ վանք, https://hushardzan.am/archives/1873
24. Նորավանք 6: Պատմությունը. Նորավանք: Մոմիկ. Համալիրը, http://www.armenianheritage.org/hy/monument/Noravank/664
25. Սանահին, http://www.armenianheritage.org/hy/monument/Sanahin/928
26. Սաղմոսավանքի միջնադարյան դպրոցը, https://www.qahana.am/am/christian/show/203496132/60
27. Ս. Հովհաննես եկեղեցի, https://hushardzan.am/archives/4378
28. Ս. Գևորգ եկեղեցի, https://hushardzan.am/archives/4413
29. Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, https://www.yerevan.am/am/st-gregory-the-illuminator-church/
30. Սբ. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի, https://armeniadiscovery.com/hy/place/saint-mesrop-mashtots-church
31. Սուրբ Գայանե վանք, https://ejmiatsin.am/our-city/34/
32. Սուրբ Հովհաննես Կարապետ (Մկրտիչ), http://armenianchurchco.com/9781.html
33. Սուրբ Հովհաննես մատուռի հրաշագործ ուժն ու մատուռ տանող բարդ ճանապարհը, https://www.shantnews.am/news/view/456424.html
34. Սուրբ Հռիփսիմե վանք, https://ejmiatsin.am/our-city/31/
35. Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, https://ejmiatsin.am/our-city/36/

36. Սուրբ Շողակաթ եկեղեցի, https://ejmiatsin.am/our-city/35/
37. Սևանավանք, https://www.mshakuyt.com/page-details.php?id=25&lang=am
38. Վանական համալիր Հաղարծին, https://hushardzan.am/archives/11727
39. Տաթևի վանքի պատմությունը, http://ter-hambardzum.net/tathevi-vankhi-patmuthyuneh-nkarner/
40. Տեղերի վանք, Տեղեր, Հայաստան, ttps://www.building.am/arm/buildings-index/tegher-monastery-tegher-armenia/
41. «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության նախագիծ, https://www.e-draft.am/projects/229/about
42. Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցի, https://hushardzan.am/archives/3068
43. Camino Routes, http://santiago-compostela.net/routes/
44. Certificate of the pilgrimage in the Holy Land, http://www.cicts.org/default.asp?id=633
45. Current world population, https://www.worldometers.info/world-population/
46. Jerusalem is fastest-growing tourism destination in world, https://www.israel21c.org/jerusalem-is-fastest-growing-tourism-destination-in-world/
47. Pope Francis names St. Gregory of Narek a doctor of the church, https://www.ncronline.org/news/vatican/pope-francis-names-st-gregory-narek-doctor-church
48. Pray for Armenia trip Pope Francis urges, http://www.ansa.it/english/news/vatican/2016/06/16/pray-for-armenia-trip-pope-urges_d071623b-627c-4129-bb00-1eec9ed21488.html
49. Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am
50. Religion by Country 2022, https://worldpopulationreview.com/country-rankings/religion-by-country
51. Religious Tourism (Pilgrimage), pp. 73-74, https://egyankosh.ac.in/bitstream/123456789/11473/1/Unit-6.pdf
52. Smith V. L., Introduction: The quest in guest. Annals of Tourism Research, 1992, Vol. 19, pp. 1–17
53. The Changing Global Religious Landscape, http://www.pewforum.org/2017/04/05/the-changing-global-religious-landscape/
54. The Credencial, https://oficinadelperegrino.com/en/pilgrimage/the-credencial/
55. Tourism can protect and promote religious heritage, https://www.unwto.org/archive/europe/press-release/2014-12-10/tourism-can-protect-and-promote-religious-heritage
56. Tovmasyan G. Religious tourism development bases and perspectives in the Republic of Armenia, Actual problems of the humanities and natural sciences, 2016, 1-3, pp. 7-10, https://cyberleninka.ru/article/n/religious-tourism-development-bases-and-perspectives-in-the-republic-of-armenia
57. Vatican light show tells story of St Peter, https://www.wantedinrome.com/news/vatican-light-show-tells-story-of-st-peter.html
58. What is the Testimonium?, https://caminoways.com/what-is-the-testimonium
59. 4,120,800 tourists arrived in Israel in 2018, 2019, https://www.israel21c.org/4120800-tourists-arrived-in-israel-in-2018/

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ПАЛОМНИЧЕСТВО В ПЕРВУЮ ХРИСТИАНСКУЮ СТРАНУ - АРМЕНИЮ: ПОТЕНЦИАЛ РАЗВИТИЯ РЕЛИГИОЗНОГО ТУРИЗМА В АРМЕНИИ

Религиозный или паломнический туризм - один из основных видов туризма в Армении. Армения считается первой страной, принявшей христианство в качестве государственной религии. Сегодня в Армении 1475 церквей и 610 часовен. Общее количество религиозных объектов составляет 2444. Есть существенные предпосылки для развития религиозного туризма в Армении. В статье представлены некоторые маршруты паломнического туризма, а также предложения по расширению маршрутов, совершенствованию маркетинговой деятельности, празднованию христианских праздников с привлечением туристов, а также выдаче туристам сертификата «Паломничество в первую христианскую страну - Армению», которое используется в центрах христианского паломничества - в Иерусалиме, Ватикане и Сантьяго-де-Компостела.

Ключевые слова: *религиозный туризм, паломничество, церковь, монастырь, христианство*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

PILGRIMAGE TO THE FIRST CHRISTIAN COUNTRY – ARMENIA: RELIGIOUS TOURISM DEVELOPMENT POTENTIAL IN ARMENIA

Religious or pilgrimage tourism is one of the main types of tourism in Armenia. Armenia is considered to be the first country to adopt Christianity as a state religion. Today there are 1475 churches and 610 chapels in Armenia. The total number of religious objects is 2444. There are essential preconditions for the development of religious tourism in Armenia. The article introduces some pilgrimage tourism routes, as well as suggestions for expanding the routes, improving marketing activities, celebrating Christian holidays attracting tourists, as well as giving certificate of "Pilgrimage to the first Christian country - Armenia" to tourists, which is used in Christian pilgrimage centers - in Jerusalem, Vatican, and Santiago de Compostela.

Keywords: *religious tourism, pilgrimage, church, monastery, Christianity*